ՆԱԽԱԳԻԾ
Լրամշակված

Կ-480-13.02.2020-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 7-ի ՀՕ-18 օրենքի (այսուհետ՝ Օրենք) հավելված 2-ի 2.5-րդ բաժնի 43-րդ, 2.10-րդ բաժնի 1-ին կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Մարզի անվանումը	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
Լոռի	43. Լերմոնտովո	Լերմոնտովո գյուղ
~~Տավուշ~~	~~1. Իջեւան~~	Անտառաշեն գյուղ
Տավուշ	1. Իջեւան	Իջեւան քաղաք
		Ազատամուտ գյուղ
		Ակնաղբյուր գյուղ
		Աճարկուտ գյուղ
		Այգեհովիտ գյուղ
		Աչաջուր գյուղ
		Բերքաբեր գյուղ
		Գանձաքար գյուղ
		Գետահովիտ գյուղ
		Դիտավան գյուղ
		Ենոքավան գյուղ
		Լուսահովիտ գյուղ
		Լուսաձոր գյուղ
		Խաշթառակ գյուղ
		Ծաղկավան (Իջեւանի շրջ.) գյուղ
		Կայան գյուղ
		Կիրանց գյուղ
		Սարիգյուղ գյուղ
		Սեւքար գյուղ

		Վազաշեն գյուղ

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել օրենքի հավելված 2-ի 2.5-րդ բաժնի 26-րդ, 2.10-րդ բաժնի 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 28-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ, 39-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ կետերը:

Հոդված 3. Օրենքի հավելված 16.32-ը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«Հավելված 16.32
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լերմոնտովո համայնքը գտնվում է մարզի հարավ-արեւելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գուգարք համայնքին, արեւելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Մարգահովիտ համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ ՀՀ Կոտայքի մարզին, արեւմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Շահումյան համայնքին?»:

Հոդված 4. Օրենքը լրացնել 18.54-րդ հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 18.54. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջեւան համայնքի վարչական սահմանների նկարագրությունը*

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջեւան համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 18.54-ում:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել 18.54-րդ հավելվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հավելված 18.54
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Իջեւան համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին, հարավ-արեւելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Բերդ համայնքին, հարավ-արեւմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Դիլիջան համայնքին, արեւմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ ՀՀ Լոռու մարզին, հյուսիս-արեւմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Նոյեմբերյան համայնքին?»:

Հոդված 6. Օրենքի 16.13-րդ, 18.2-րդ, 18.3-րդ, 18.5-րդ, 18.6-րդ, 18.8-րդ, 18.14-րդ, 18.15-րդ, 18.17-րդ, 18.19-րդ, 18.24-րդ, 18.25-րդ, 18.26-րդ, 18.28-րդ, 18.29-րդ, 18.45-րդ, 18.46-րդ, 18.47-րդ հոդվածները եւ հավելվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: